

Տ Ա Ր Ե Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱԿԱՏԱԳՐԻՆ

(Զ. ԴԱՐԷ Ն. Բ. ԳՐԻՍՏՈՍ ՄԻՆՉԵԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

(Շար. տես Բազմավէպ 1930, էջ 821)

ԳԼՈՒԽ Ա.

Հայաստանի ամենամեծ պատմութիւնը. — Պարսկական տիրապետութեան շրջան. — Մակեդոնական մուսուլման. — Հիմ հայաստանի կազմութիւն և ամրոք բարձրացումը. — Մեծ Տիգրանի կայսրութիւնը և իւր մեծաւոր յաջողութիւնը. — Հայաստանի չորսմայրեցոց դէմ պատերազմի առաջին շրջանը. — Պառամ — «Ամսոմիոսի ոմիոմ» և Օգոստոսի քաղաքականութիւնը (521 տ. — 6 տ. Ն. Բ.)

Հայ ժողովուրդը — ժամանակակից ամենահին քաղաքակրթ ազգերէն մին է։ Նա եկած է մեր աշխարհը, այնպիսի հեռաւոր հնութենէ, մինչ զոյսթիւն շուրհէին տակաւին արդի եւրոպական ժողովուրդները, Գաղղիացիք, իտալացիք, Անգղիացիք, Ռուսները, այլ և հագիւ ելած էին պատմութեան հրապարակին վրայ նոյն իսկ հին դասական ազգերը, Հելլենները և Հռոմայեցիք։ Նոյն իսկ Արմինա (Armina) անուան կը հանդիպինք առաջին անգամ Վշտասպեան Գարեհի արձանագրութեան մէջ 521 տ. Ն. Բ., բայց Բարեղունեան Թարգմանութեան մէջ ասոր կը համապատասխանէ Ուրարտու կոչումը (կարելի է մերայւոր կոչումը Արարատայ), ինչպէս որ նախապէս երկրորդ կը կոչուէր։ Իսկ Ասորեստանցոց վերաբերումը նկատմամբ Ուրարտու երկրին և անոր ժողովրդեան ինչպէս նաեւ ուրիշ մեծաւոր նահանգներու, որոնցմէ մասնաւորապէս յաճախ կը յիշատակուի Նայիրի, կարելի է հետախուզել ըստ սեպածե գրութեանց ցԺԱ-ԺԲ Գ. Ն. Բ.։ Այսպէս յայտնի է, օրինակի համար Թակ-զաթ-Փաղասարայ Նայիրի երկրին վրայ արշաւանդները մեծաւորապէս 1100 տ. Ն. Բ.։ Սաղմանասար Գ.ի երեք արշա-

ւանդները Ուրարտուի վրայ (860-824 տ. Ն. Բ. և ասոր նմաններ)։ Այն ամենահին ժամանակներէն Ուրարտուի ժողովուրդները արդէն մտած էին քաղաքակրթ աշխարհի շարքին մէջ։

Ներկայ գիտութիւնը կը համարի, որ Հայոց ծագումը իբրեւ առանձին ժողովուրդ, յարակից է կիմերական շարժման հետ։ Բ-է Գ. Ն. Բ.։ Փոխզական ցեղերէն մին (հնդ-եւրոպական ցեղի ժողովուրդեան պատկանող) այս զարաշրջանին կ'անցնի Թարակայէն փոքր Ախաւ Թառապաւ քանակները գիմեցին յետոյ Ալիւ և Եփրատ գետերու վերին կողմերը և ասկից նուանցին Ուրարտու երկրը, հպատակեցնելով և ձուլելով քնկներու։ Այս երկու ցեղերու խառնումէն՝ քնկ հին Ուրարտացիներէն (ոչ հնդ-եւրոպական, ըստ Մարրի, այլ Թարեթական արմատ) և աշխարհակալ ժողովուրդէն (հնդ-եւրոպական Փոխզացիներէ) ձեւացաւ հայ ժողովուրդը։ Այս կը հաստատուի հայ լեզուի վերլուծումով, որուն մէջ կը տեսնուին արիական խառնուրդները ուրիշ կազմով լեզուի

տարրեր (ցեղակից յարեթական լեզուններու, վրաց, Ֆրիզիներու և ուրիշներու)։ Կրկին ցեղի ժողովրդեան միութենէն, կ'անուանեն զայն կրկին անուշով, ասոնք գիրենք հայ՝ կ'անուանէին, ուրիշ ժողովուրդները կը կոչէին արմինիա (armenia) (Դարեհի արձանագրութեան մէջ)։ Վերջապէս կը հաստատեն նաեւ ազգային անանութեամբ։ Մովսէս Խորենացւոյն վերկայութեամբ, նկատմամբ կրկին հայ նախահայերու Հայկի և Արմինակի (կամ Արամի)։

Հայ ժողովուրդն արդէն իւր պատմական արշալոյսին՝ դասապարտուած էր կրեւելու պարսիկ իրանականութեան սատիկ ազդեցութիւնը, դնելով իւր կնիքը ժողովրդեան նկարագրին և լեզուին վրայ՝ Զորոյց կայ, թէ Ի սկզբանէ՝ նորածին հայ թագաւորութեան և երազածաւալ պարսկական ինքնակալութեան մէջ, Զ դարուն Ն. Բ., որ Մարաց իշխանութեան տեղը կ'անցնէր, դաշնակցական յարաբերութիւն գոյութիւն ունէր։ Գնեհոփոն (Կիւրամարգին մէջ) կը պատմէ, թէ հայ թագաժառանգը Տիգրան՝ Կիւրոսի հետ մեծ բարեկամութեամբ կապուած էր և իւր եղբոր Էմբասի (Թերեւս Սմբատ) հետ կը մասնակցէր Կիւրոսի՝ Բաբելոնի պաշարման ժամանակ։ Ասոր կը վկայէ նաեւ Երեմիա Մարգարէն, գրչելով. «Հրախրեցէք անոր վրայ (Բաբելոնի)՝ Արարատեան, Մինիի և Ասքանազեան թագաւորութիւնները»։ Սակայն այս դաշնակցութիւնները չէին կրնար երկար տեւել Պարսիկ աշխարհակալութեան ոտնձգութեան պատճառաւ, և Հայաստան շատ աւելի տկար ըլլալով,

տակաւին նորածին թագաւորութիւն, հարկադրուած էր հպատակելու պարսկական գերիշխանութեան։ Դարեհի արձանագրութենէն, շնայելով անոր պարճենկոտ գրութեան եղանակին, մենք կը տեսնենք որ կոնքն հարկադրուած քանի մը անգամ կրկնելու և թէ հինգ արիւնհանգ արշաւանքներէ ետքը միայն պարսից յաղթութեամբ կը վերջանայ։ Հայաստան հարկադրուած էր խոնարհելու գերագոյն ուժի առջեւ և եղաւ Պարսից ինքնակալութեան սատրապութիւններէն մին (519. Ն. Բ.)։

Հին Պարսից Հայաստանի մէջ տիրապետութիւնը տեւած է երկու դար։ Հայաստան ինչպէս նաեւ ուրիշ պարսկական ինքնակալութեան գաւառները՝ սատրապներով կը կառավարուէին, միացնելով իրենց անձին վրայ վարչական դատաւորութեան իշխանութիւնները (Դարեհ Գ. Կողոմանոս հին Պարսից վերջին թագաւորը Հայաստանի սատրապ եղած է երիտասարդութեան ժամանակ)։ Ձինուռական իշխանութիւնը յանձնուած էր առաջին սպարապետին, որուն գործունէութեան սահմանը ազատ էր ստորադի վարչութեան շրջանէն։ Հայաստան թագաւորին կը հաստատենք տուրք՝ տարին 400 տաղանդ (կէս միլիոն ռուպլի), բաց ասկից 20.000 ձի, վասն զի հռչակաւոր էին տեղւոյն ձիերը, զորս կը յիշէ Եզեկիէլ մարգարէն, «Թորգոմի տունէն վաճառքի փոխարէն կը բերէին քեզի ձիեր և հեծեալներ և ջորիներ»։ Հայերը որոշ թուով զօրք կը հասցնէին պարսկական բանակին, 40.000 հետեւակ և 8000 հեծեալ։ հիւսուած սպաւարտներով, բար-

1. Հայ բառին մէջ (յոգ. Հայթ) լեզուագէտները կը տեսնեն արեական peti արժաւէն ծագած, յոսմարէնի մէջ peter, լատիններէն patet (հայր)։ Հայերը իրենց երկիրը կը կոչեն Հայաստան, այսինքն տուն հայոց (ստանը իրանական ծագում)։ — Փոխական ծագումն հայոց կը հաստատեն Հերոդոտ, Եւդոքս։ Ստարոն և ուրիշ յայն գրողներ։ Եոյց կու տան նաեւ անուանումը լեւոնաշխարհի մը Բիթթանիոյ և Պափագոնիոյ սահմանի վրայ — Օրմիւնիոն և Սիւրուպի մօտ նաւահանգիստ մը Արմենի։ Մեծ Նշանակութիւն ունի նոյնպէս

որ Մովսէս Խորենացւոյն անուանած հին Հայաստանի կեդրոնները, Վան, Արմաւիր (հին ժայռացազներ), Արարատ, Սեւանի լիճ, Մանազկերտ, Արտակէ, և Համապատասխանեն ուրարտական արձանագրութեանց ցոյց տուած տեղիքներու։

2. Հնագալայս մենք կը հետեւինք զլիւսաւորապէս խաւթեանցի լրացնելով զայն Դալէնի գրքին և այլն։ Դարեհի արձանագրութեանց թարգմանութիւնը խալաթեանցի մօտ, եր. 85 եւն։

ձրավիզ կօշիկներով, սուրբերով, նիզակ-
ներով, տէգներով, վահաններով, Հայերը
երկար ժամանակ պարսից պետութեան
մաս կազմելով, նշանակելի շափով իրա-
նեան դարձած էին, իրանեան (պարսկա-
կան) քաղաքակրթութեան ենթակրուած
էին, Հայ ժողովրդեան մէջ կան շատ գծեր՝
որոնք ցոյց կու տան իւր ծագումն այն
դարաշրջանին, երբ նա հպատակ էր հին
պարսից։

Ըստ Հերոդոտոսի՝ Հայաստան պարսից
պետութեան ժԳերորդ սատրապութիւնը
կը կազմէր՝ Բաննոփոն կէս դար հոգը
գրած ժամանակ, կը բաժնէ Հայաստանը
երկուքի, արեւելեան Հայաստանն և արեւ-
մտեան Հայաստան՝ երկուսն առանձին սա-
տրապներով¹։ Արեւելեան Հայաստանի
մայրաքաղաքը կը կոչեն Շահապիվան
քաղաքը (յառկապէս սատրապի աթոռա-
նիստ), իսկ արեւմտեանին՝ Ալեի՝ դարա-
նադեպ վերին Եփրատի վրայ (այժմ Գէ-
մակ)։ Ըստ երեւոյթին բոլոր Արեւմտեան
հարստութեան ժամանակ, Հայաստան հա-
ւատարիմ մնացած էր Պարսից, ոչ մի
գրոյց կայ ո՛ր և է ապստամբութեան նշանի
Հայոց։ Ենթադրութիւն կայ նոյնպէս թէ
սատրապութեան պաշտօնը ժառանգական
եղած ըլլալ գոնէ Արեւելեան Հայաստանի
մէջ Ե դարէն սկսեալ, և Ստրաբոն, օրի-
նակի համար, Հայաստանի «Թագաւոր»
կ'անուանէ զայն։ Պարսից Թագաւորներու
մղած բոլոր պատերազմներուն մէջ, հայերը
ամէն անգամ անհրաժեշտ մասնակցած են
զօրքով իրենց Թագաւորին կողմէն։ Այս-
պէս հայ պատերազմող զօրամարմինը կը
գտնուէր Փանքըսէի բանակին մէջ (480
տ.)։ Հայերը կ'աջակցէին Արտաշէս Մեծ-
մանի իւր եղբօր Փոքր Կիւրոսի դէմ մղած
կռիւներուն մէջ (401 տ.)։ Հուսկ Հայերը

կռուեցան պարսից կողքին՝ Աղեքսանդր
Մեծին դէմ Գաւգամելայի մօտ (331 տ.)։

Հայոց պարսից հետ ունեցած սերտ
միութիւնը մակեդոնական տիրապետու-
թեան ձեռքով խզուեցաւ։

Մեծն Աղեքսանդրի² (մեռած 323 տ. Ն.
Ք.) արշաւանքները կործանեցին ամբողջ
պարսկական միապետութիւնը, որմէ հոգը
սկսաւ հելլենիզացիութեան արագ տարա-
ծումն Արեւելքի մէջ։ Հայաստան հարկա-
դրուեցաւ մասնակցելու ուրիշ պարսկա-
հպատակ թագերու բախտին, և Աղեք-
սանդը տակաւին կինդանութեան ժամա-
նակ կարգած էր Հայաստանի սատրապ
Միթրէն անունով մէկը, որ կամաւորապէս
անցած էր յունաց կողմը, բայց ասոր իշ-
խանութիւնը կը հասնէր երկրի այն մա-
սին, որ յետոյ կոչուեցաւ Փոքր Հայք
(կամ Պոնտական)։ Արեւելեան Հայաս-
տանի վրայ (յետոյ Բարձր Հայք կոչուած)
Մեծն Աղեքսանդրի Միեռն սպարապետը
ի սկզբան չունեցաւ յանդուրժին, ժողո-
վրդէնէն հոտ մղուած էր։ Բայց աստիճա-
նաբար Աղեքսանդրի յաջորդներու ժամա-
նակ, բոլոր հայ երկիրները անցան մա-
կեդոնական տիրապետութեան ներքեւ։
Խպտոսի (301 տ. Ն. Ք.) ճակատամար-
տէն հոգը, երբ Աղեքսանդրի յաջորդնե-
րուն ժառանգութեան համար կռիւները
վերջացան, Հայաստան ուրիշ արեւելեան
զաւաճներու հետ անցաւ Սելեւկոսի և
Սելեւկեանց Թագաւորութեան մաս կազ-
մեց։ Այս Սելեւկեան Հայաստանը հաւ-
դիսացաւ այն բլթիւնը ոսկից յաջորդա-
բար զտրգացաւ և եղաւ անկախ Հայաս-
տան։

Սելեւկեան Թագաւորութեան մէջ կը
գտնուէին Հայաստանի երկու զաւաճներ.
Բարձր Հայք և Կամ Մոփսք աշխարհ (Եփ-

1. Կը համարեն որ Արեւելեան Հայաստան նոյն է
ԺԳ. սատրապութեան հետ ըստ Հերոդոտոսի, իսկ
Արեւմտեանը մասամբ կը համապատասխանէ ԺԲ. սա-
տրապութեան։ Տե՛ս Գ. Թաւրեղիւզի, 760 Խաւքեան,
91 հեմ։

2. Ն. Աղեքս հեմ։

3. Աղեքսանդր Մեծին ժամանակ Հայաստանի վե-

ճակը մնաց կը բացառենք մեր անմիջական Կուրնաթոս
Կուրաթոսի և Ապոլոնիոսի վկայութեանց քննութեամբ և
այլն։ Միթրէն (ըստ այլոց Միեռն) սատրապի անունը
կ'անննջ Կուրնաթոս Կուրաթոս, Ե. 1. որ կ'ըսէ՝ Հա-
յաստան արուեստը Սարգիկեցի Միեռն մասնէին։ Նոյն
Կուրնա. Կուրաթոս, Գ. 2. կը հաստատէ թէ հայ զունդ
մը կը գտնուէր Փարսիի բանակին մէջ։

բատի միջին ընթացքին և Տիգրիսի վերինն միջև), յետոյ բաժնուելով իսկական Հայաստանի և Երփաց աշխարհի և քոքը Հայաստանի (կամ Պոնտական, վերին Լիկուսի, Ալիսի և վերին Եփրատի միջև), Հայաստանի սահմանակից նահանգները զանազան ժամանակներ, զանազան անուններ կրած են, բայց ծանօթագոյններն ասոնք են, Պոնտոս, Կապադովկիա, Կիլիկիա, Միջագետք, Արարատական, իսկ հիւսիսէն կոմկապու լեռնաշխարհներու գաւառները, Կողքիս, Իրբրիա, Աղուանք։ Սելեւկեան թագաւորութիւնը երբեք զօրաւոր պետութիւն եղած չէ, և սկիզբէն ի վեր, մակեդոնական փոխարքաներու շարքին մէջ, մենք կը տեսնենք հայ գաւառներու գլուխները, տեղական վարիչներ «թագաւորի» տիրոջով։ Տակաւին նախ քան Սելեւկեան թագաւորութեան երեւնալը, Նէոպոլիտէոս (Պերդիկէի զենպան) փոխարքայի ղէմ կը պատերազմէր «Փոքր Հայոց թագաւորը» — Արտաւազդ։ Յետոյ պոնտական թագաւորի՝ Փառնակի (190—156 տ.) ձեռնարկութեան մէջ կը մասնացէր «թագաւոր քոքը Հայոց» Միհրդատ։ Նոյնը մենք կը տեսնենք Բարձր Հայոց և Երփաց աշխարհի մէջ, թէպէտ և անոնք թագաւորները մեզի հասած (ի մէջ այլոց զրամին, բայց միւրն ալ պարսկական են. Արշամ (մերձ. 240 տ.), փրատափեռն, Գահրբաշ, Զարիազը, Արտաւան, հաւանորէն ասոնք էին իրանեան մշակոյթը ընդունող հայեր։ Բննադասունելէ՝ ոմանք կը համարին թէ Հայաստանի մէջ պարսկական տիրապետութեան դարաշրջանին պահուած են տեղական հարստութիւնները։ Այս թագաւորներու գոյութիւնը ցոյց կուտայ այն կապերու տկարութիւնը, որով Հայաստան կապուած էր Սելեւկեան թագաւորութեան հետ, որ արդէն կը զիմէր արագ քայքայման, Սակայն երեք «թագաւորութեան» պատմական րախտերը տարբեր էին։ Փոքր Հայաստանի համար

կորստաբեր եղած է զարգացող պոնտական թագաւորութեան դրացիութիւնը. Բարձր վերջերը Ն. Բ. վերջնականապէս կլլած էր զայն և բաժնած 5 նահանգներու և ստորաբաժանած 120 սատրապութեանց։ Երփաց աշխարհը ոչ երբեք կըրցած է հասնիլ որ և է հաստատուն ինքնավարութեան, միայն առժամայն պահած է զայն օգնութեամբ Կապադովկացոց թագաւորին։ Ընդհակառակն, իրապէս, բուն Հայաստանը (կամ Բարձր Հայք) արագ ամրացած է և կարելիութիւն ունեցած, մէկզի նետել Սելեւկեանց աւատական հրպատակութիւնը և յետոյ զարգանալով հասած է ամենազօր թագաւորութեան։

Սելեւկեան իշխանութիւնը ոչ երբեք կրցած է հաստատուն հիմունք ունենալ Բարձր Հայաստանի մէջ։ Որուն արգելք եղած են նաեւ այն կողմերու լեռնային բնութիւնը, որ կը պաշտպանէր զիրենց յունաց «պատժողական արշաւանքներէն», և իրանականութիւնը՝ որ իւր արմատներ ձգած էր ժողովրդեան մէջ և երկար ժամանակ հելլենականութեան ղէմ մարտ մղած։ Յետ քանի մը անյալող արշաւանքներու Հայաստանի վրայ, Սելեւկեանք նախընտրեցին Հայոց ազատութիւն տալու իրենց ներքին գործերու մէջ, բաւականանալով միայն անոնց զերագոյն իշխանութեան ձեւական ճանաչումէն։ Մինչդեռ Հայ թագաւորները եռանդով կ'աշխատէին իրենց ժողովրդեան ի մի ձուլելու մասին։ Ստրաբոնի վկայութեանց համեմատ, Հայաստանի զանազան ցեղերու ժողովուրդները, սկսած էին խօսիլ ամենուն հասկընալի մէկ լեզուով (հայերէն), իսկապէս սկիզբը Բ. Գ. Ն. Բ. Զարիազը (Երփաց աշխարհի մէջ) և Արտաշէս Ա. (Բարձր Հայոց մէջ) թագաւորներու ժամանակ։ Այս թագաւորներու ատեն կատարուեցաւ Հայոց ազատութիւնը Մակեդոնացոց տուժն որ կապ ունէր Հոմակայեցոց Մերձաւոր Արեւելիի մէջ երեւնալուն հետ, 189 տ. Ն. Բ. Լուկիոս Սկիպիոն Մագնեսիոյ մօտ ջախջախեց Սելեւկեանց Անտիոքոս Գ-ը, որ ծառայեց իբրեւ ազգակ

1. Տես էջ 369 ծանօթութիւն թիւ 3.

ազգաց ազատութեան: Զարիադը Մոփքի մէջ ինքզինը անկախ հրատարակեց, Աւտաշէս՝ Բարձր Հայաստանի մէջ:

Ասկից յետոյ սկսաւ զգալի կերպով զօրանալ Բարձր Հայաստան: Արդէն Աւտաշէս Ա. արքան (189—160) կը համարուէր այնքան զօրեղաբան թագաւոր, որ (ըստ աւանդութեան Ստրաբոնի) իրեն ներկայացաւ Աննիթաղ, Զրամայի մօտ պարտութենէ ետքը, յուսալով օգնութեամբ հայ արքային վերսկսելու պատերազմը Հոռմայեցոց դէմ: Ի մէջ այլոց, ըստ առաջարկութեան Կարթագինեան հերոսին, Արտաշէս կերտեց նոր Մայրաքաղաք Արտաշատ (այսինքն հրճուեցաւ Արտաշէսի) Արաքսի եզերքը, ամրապինդ պարիսպներով, հողապատնէշներով և խրամներով: Թագաւորութեան ամրապնդելու գործը շարունակեց Արտաշէս յաջորդը Տիգրան Ա. (160—130 ա.) և անոր Արտաշազդ եղբայրը (125—95 ա.), բայց Հայաստանը քաղաքական գերագոյն բարձրութեան հասցնելու բախտը վիճակած էր Տիգրան Աի որդւոյն Տիգրան Բ Մեծին (95—56 ա.): Դարաշրջանին՝ քաղաքական դէպքերը օգնեցին զօրանալու համեմատաբար. փոքր հայ թագաւորութեան, և Մեծին Տիգրանի թագաւորութեան տարիները, ազգային պատմիչներու և ժողովրդեան յիշողութեան մէջ մնացին իրրեւ. Հայաստանի մեծ փառքերու օրեր: Գնա՛ի որ Հայ պատմութեան այս դարեջրջանը մեզի աւելի յայտնի է քան միւսները, սա կարող է լոյս սփռել և բոլոր երկրի վիճակին վրայ Բ—Ա դ. Ն. Գ.:

Մեծն Տիգրան¹ իւր թագաւորութիւնն սկսաւ միացնելով Մոփաց աշխարհը, որուն Արտաշէս թագաւորը չէր կարող դիմադրել Տիգրանի ուժին դէմ, և Բարձր Հայաստանի կրկին մասերը նորէն միացան

Ուսկից վերջ շուտով Տիգրանին առաջարկեց դաշնակցելու պնտական զրաքի թագաւորութեան հռչակաւորն Միհրդատի (Բ Եւպատոր) որ յետոյ նոյնպէս կոչուեցաւ Մեծ և ընդհանուրին կարծիքով Աննիթաղէն ետքը սա եղաւ Հոռմայ թշնամիներուն ամենէն զարհուրեցիկ: Դաշնակցութիւնը ամրապնդուած էր ամուսնութեամբ. Տիգրան կ'ամուսնանայ Միհրդատի կէսուպատրայ դստեր հետ: Երկու թագաւորները Հոռմայեցոց դէմ յորինեցին կռիւներու մեծղի ծրագիր, Հոռմայ հեռաւորութեան վրայ յոյսերին դնելով, անշուշտ, ոչ ըստ բաւականի գնահատեալով անոր զօրեղութիւնը: Կ'ենթադրէին արտաքսելու Հոռմայեցիները բոլոր Միհրձաւոր Արեւելքէն, և Միհրդատ մտադիր էր կազմակերպել կայսրութիւն փոքր Ասիոյ Սեւ ծով: Եզերքներով և Տիգրանին յանձնել Արեւիստանն և խոր Ախան:

Տիգրան սկսաւ կռիւը խուժելով ի կապաղովկիս որ կը պահանջէր Մոփաց աշխարհը: Եւ որովհետեւ կապաղովկիոյ թագաւորն Հոռմայ հովանաւորութեան ներքեւն էր, և Սիդգա այն ատեն Կիլիկիոյ փոխ հիւպատոսն էր, ելաւ Հայոց դէմ և ընցեց գանձեր Եփրատի միւս կողմը: Բայց Հոռմայ ներքին երկպառակութիւնները հարկադրեցին Սիդգան հեռանալու Ասիայէն և ապա վրայ եկան Հոռմայ քաղաքցիական կռիւներու տարիները (Մարիոսի և Սիդգայի), տարազրութիւններ, պատերազմական դիվիսիոններ և այլն: Ուսկից օգտուելով Միհրդատի և Տիգրան վերսկսան իրենց աշխարհակալութիւնները: Միհրդատ զբաւեց փոքր Ասիոյ մեծ մասը և իւր զօրավարները անցան Եւրոպա, առին Աթէնքը, հրատարակեցին Ելլադայի ազատութիւնը: Իսկ Տիգրան շատ կոտոր

1. Այսպէս խաւթեանց կը վերահաստատէ Հայաստանի առաջին թագաւորներու կարգը. հր. 149. Կուլեն, հր. 194. Հայ աւանդութեանց հետեւելով ուրիշ անուններ կ'ուզէ. Մեծն Տիգրանի քննդհան տարին (140) և անոր մարմնը կը հաստատէ Ուլանա, հր. 104. Կիլիկիոյ, Լուսիանոսի, Պլուտարքոսի, Ապոլոնիոսի, Յուստինոսի վկայութեանց վրայ հաստատուած:

2. Յաջորդաբար, բայց ի խաւթեանց և Կուլենի բացատրութեանց, մենք կը հետեւինք Ուլանաի Միհրդատի նկատմամբ զբաժնի ի զգաւ տարածանութեան խաւթեանց և Կուլենի մէջ, մենք իր նախնարանքն առաւել կարծեցը, ամրապնդ անոր համագիշտութեամբ (սառը բերելով հիւնիւրու և Հայ գրեթէ բոլոր վկայութիւններն):

բաժնեիր տալով Պարթեւաց գրաւեց անոնց մէջ քանի մը նահանգներ և ստիպեց թազաւորն հրաժարելու «Արքայից արքայ» տիրադոսէն և սեփականեց զայն իրեն՝ յետոյ գրաւեց նշանաւոր մասը Միջագետքի, Կիլիկիա, Ասորիք, մինչև իսկ Փիւնիկի և Պտղոմայիդի, մերձեանալով Հրէաստանի սահմանները, և վերջապէս Կապադովկիան որ ի սկզբան Միհրդատին թողուցած էր։ Տիրարան գրաւած երկիրներու մէջ մասն ուղղակի միացուցած էր Հայաստանի, մաս մ'ալ աւատական իշխաններու բաժնած՝ նշանակելով իւր ազգականները կամ հաւատարիմ ծառայողները։ Հայ Տիրարանի «արքայից արքայ» կայսրութիւնը կը տարածուէր «Կիւր գետէն մինչև Յորդանան, և Մարական լեռներէն մինչև Կիլիկիոյ Տաւրոս լեռները»։

Հոմ 80-երորդ տարւոյն շրջանին միայն կարելիութիւն ունեցաւ լուրջ ուշադրութիւն դարձնելու Արեւելքի վրայ։ Միւղայի Գերոնէի և Որքոմնի քով յաղթութիւնէն ետք Միհրդատ ստիպուած էր թողու իւրական (85 տ.)։ Քանի մը տարի ետքը նա վերսկսաւ կռիւր պատէն համալելով Հռոմայեցւոց Սպանիոյ մէջ նեղ դրութիւնը (Սերտորիոսի ապստամբութիւն), բայց դարձեալ Լուկուլլոսէն յաղթուեցաւ (73 տ.) ու փախաւ Տիրարանի քով։ Տիրարան հակամէտ չէր օգնելու Միհրդատին Հռոմայ վրէժին չհանդիպելու համար, սակայն և ոչ ալ յօժարեցաւ իւր աները թըշնամելուն ձեռքն յանձնելու Այն ատեն Լուկուլլոս յարձակեցաւ Հայաստանի վրայ և ծանր քնասներ հասցուց Տիրարանակերտի մօտ Տիրարանի և Միհրդատի զօրաց (69 տ.) որոնց թիւերը սակայն չափազանցած են հռոմայեցի պատմիչները՝ իրաւ է, շատ վերջ Հռոմայ զորքերը նըւազ յաջողութիւն ունեցան. Լուկուլլոս

Հայաստանի շատ խորիւր, ժայռոտ անապատները թափանցեց, զօրքը միմիկ առաջ երթալու և հռոմայեցիք հարկադրուեցան նահանջել։ Տիրարան առժամանայ նորէն ձեռք ձգեց զերթէ բոլոր իւր երկիրները, և Միհրդատ վերադարձաւ իւր թագաւութեան մէջ։ Այս ատենները Պոմպէյոս Արեւելք երեւցաւ։ Սա վերջնականապէս խորտակեց Միհրդատի ուժերը որ փախաւ իւր վտափորի կալուածները և հոն շուտով վերջ տուաւ իւր կեանքին (անձնապահութեամբ 63 տ.), և ապա Պոմպէյոս Հայաստանի խորը թափանցելով՝ հասաւ մինչև փաղիս (Րիոն) գետը շատ նեղը զնելով գժիրարան, ի միջի ալլոց Պոմպէյոսի կ'օգնէր Տիրարանի ըմբոստացած զաւակը թագաժառանգ Կրտսեր Տիրարանը։

Վերջ ի վերջոյ Տիրարան անհրաժեշտ համարեցաւ տեղի տալ Սա բախտախնէղիւր և երազներով ապրող մը չէր Միհրդատի նման։ Տիրարան անկէց աւելի տարէց ըլլալով ժամանակ մը ազդուեցաւ իրմէ աւելի երիտասարդ և աւելի հրապուրուող դաշնակցէն, բայց առաջին յաջողութիւններէն վերջ յայտնի երեւցաւ որ տեսէ էր միայն որ իւր զրաւած երկիրները ձեռքէ չթողու, մինչդեռ Միհրդատ իւր փառասիրութեան սահմանը չէր գիտեր։ Ինչպէս կ'երեւի, Տիրարան հասկցած էր թէ անկարելի է Հռոմայեցւոց ուժը բոլորովին ջախջախել։ Ասով կը մեկնուի թէ ինչո՞ւ համար նա Լուկուլլոսէն յաղթուելէն ետքը հրաժարեցաւ Միհրդատի իւր աները չհետեւելէն. թէպէտ և պատուի զգայուեմով չյօժարեցաւ մատնելու զայն։ Միհրդատի մահէն յետոյ տեսնելով Պոմպէյոսի անխուսափելի յաղթութիւնը, Տիրարան վճռեց արտաքին խոնարհութեան գնով, փրկելու իւր արջաւանքներուն իրական պտուղները, անձնասիրութիւնը

1. Պարթեւ արքաները պարսիկներէն ժառանգելով «Արքայից արքայ» մակդիրն — անկէ ետքը ժամանակ մը կ'անուանուէին պարզ «Արքայ պարթեւաց» տիրադոսով (Խաւարթեան)։

2. Լուկուլլոս ինքը ծանոյց ծերակոյտին թէ հայե

բէն 100,000 հոգի ապանւեցան. իսկ հռոմէական բանակէն 1 հոգի։ Պլուտարքոս կը բարձրացնէ վերջին թիւը մինչև 5 հոգւոյ։ Տեսաւ Լիւիոս Կլոսէ թէ հայերն 20 անգամ նուազ էին քան իրենց թշնամիներն և այլն։

զոհեց պետութեան օգուտներուն, Հայ թագաւորը զնաց Պոմպէոսի բանակը, հանեց թագաւորական թագը հռոմայեցի զօրավարին առջեւ, ծնրադրեց, Պոմպէոս տու գանգ դրաւ Հայաստանի վրայ 6000 տաշանին (9 միլիոն ռուպլիի չափ), բայց Տիրացւոյ թողուց իր երկրէն ելլելու և մինչև իսկ Միշագետքի մէջ մասը, պահեց անոր «Ալքայից արքայ» Խիտրոսն և ընդունեց անցաւ զայն Հռոմի ժողովրդեան դաշնակից բարեկամներու թուին մէջ, կրտսերն Տիրացւոյ յետոյ Պոմպէոսի ղեկավարութեան արժանացաւ և տարուեցաւ Հռոմ իբրեւ յաղթանակի զարդ՝:

Մեծն Տիրացւոյ, ինչպէս կ'երեւի, իւր կենաց վերջին տարը տարիները խաղաղ անցուց, նուիրուելով իւր թագաւորութեան ներքին բարեգաւթութեան: Սակայն Հռոմի հետ հերոսական կռիւներու ջրջանը չէր աւարտած: Իւր որդւոյն և յաջորդին Արտաւազդ Բ-ի (55-33 տ.) Տիրացւոյ կտակեց, իբրեւ զրաւ խաղաղութեան՝ դաշնակից միալ Հռոմի հետ: Բայց հռոմայեցւոց սազեցութիւնը ժողովրդական չէր Հայաստանի մէջ. հասարակութեան մէջ մեծ համակրութիւն կար դէպ ի իրանեան աւանդութիւնները և այս կը մղէր դէպ ի Պարթեւները որոնց հետ սովորութիւններով և կրօնքով կապուած էին. իսկ հասարակութեան բարձրագոյն դասը յաջորդաբար հելլենականութեան կը դիմէր և հակամէտ էր տենեւ Հռոմայեցւոց վրայ բարբարոսութիւն, իլլւազան ստրկացնողներու Բաց սակից գեռ կենդանի էին Տիրացւոյ շքեղ յաղթութեանց յիշատակները, և վրէժխնդրութեան զգացումը Հռոմայեցւոց հանդէպ՝ անոնցմէ կրած նախատանաց համար: Ուստի զարմանալի չէ որ 55 տ. երբ Հռոմայեցւոց և Պարթեւացւոց մէջ պատերազմ բռնկեցաւ, Հայաստանն չնայելով

որ թագաւորը անձամբ կ'երթար Հռոմայեցւոց բանակը խոտառնալով իւր օգնութիւնը, վերջ ի վերջոյ յայտնուեցաւ որ Պարթեւաց կողմն էր:

Այս այն պատերազմն էր որ ի սկզբան ահաւոր պարտութիւն կրեցին՝ Հռոմայեցիք առաջնորդութեամբ կրասոսի որ էր անդամ «առաջին եռասպետութեան»՝ Խառանի մօտ (53 տ.). հռոմայեցւոց ամենէն սաստիկ խորտակումն էր, կաննի պարտութենէն ետքը, ուր ինկան 20,000 էն աւելի զօրք և 10,000 գերի. յաղթողաց ձեռքն անցան հռոմէական զօրջնիք և նոյն ինքն կրասոս իւր որդիով մէկտեղ սպաննուեցան: . . . Աւանդութիւնը կ'ըսէ, Սուրեն Պարթեւաց զօրավարը հրամայած է կրասոսի զուգին և ալ ձեռքը կտրել և տանել Որոշ թագաւորին: Որոշ այն ժամանակ կը գտնուէր հայ քաղաքը (հին մայրաքաղաք) Արտաշատ՝ Արտաւազդի հետ: Հոն հարսանեաց հանդէս կը կատարէին Բակուր արքայորդոյն հայ թագաւորի քրոջ հետ, և թատերաբեմի վրայ հրաւրեցող առջեւ կը ներկայացուէր Եւրիպիդէսի «Բաքոսեաններ» ողբերգութիւնը: Սիլլա՛ն Սուրենի զեպպանը վազեց թատերաբեմին վրայ, խոնարհեցաւ արքայից առջեւ և բեմին վրայ ձգեց արիւնքաներկ Խոնարհաների Մոյն զերսաւանը որ Ազաւի գերը կը կատարէր, (որուն անունը հասած է մեզ, Յասոն Տրալլացի) որ խաղին ընթացքին համեմատ պիտի Պեմփեայ զլուխը ցուցնէր, յօշոտուած կրասոսի զլուխը բռնած ողբերգութեան տառնաւորը յարմարեցնելով արտասանեց. «Մենք լեռնէն բերինք մեր եղնիկի եղջիրները նոր սպանուած մեր բախտաւոր որսորդութեան մէջ»։ Հանդիսականները խանդավառուեցան, ամէնքը ծափահարեցին, ամէնքը ուրախակից կ'ըլլային մէկմէկու այսպիսի

1. Մեծն Տիրացւոյ թագաւորութիւնը, տես Խաւս. Թեմեց, Դուլէն, Ռայնաի, Կոստանեանց և այլն: Մեր կարծեցով պատմաբանները կ'ախարհուած Միհրդատի վիպական պատկերէն, ըստ բուսական լին զնախորհած Տիրացւոյն իւրեմագոյն պատկան իմաստութիւնը՝ արեւի

լուրէ իւր դիտաւորութեան մէջ:

2. Կիլիկիոն (Յաղազդ ֆեսա-) կը յիշէ զՏիրացւոյ Հայաստանի թագաւոր 56 տ. յաջորդին մէջ 55 տ. արդէն կը թագաւորէր Հայաստանի մէջ Արտաւազդ Բ:

զօրաւոր թշնամի մը պարտած ըլլալուն համար՝

Այս Հոռոմի քաղաքական կոիւր վրայ գալով (գծաութիւն կենարտ՝ Պոմպէոսի և իւր կուսակիցներուն հետ), թոյլ տուին մէկէն կրասոսի վրէժն առնելու։ Քանի մը տասնհազ տարիներու ընթացքին մէջ Հայաստան և Պարթևները դաշնակից ըլլալով կրցան զրեթէ անարգել ընդարձակել իրենց տիրապետած սահմանները։ Այս արշաւանքներով Պարթևն — Հայեր նորէն հասան մինչև Հրէաստան¹, և այս ատեն կ'ըսուի թէ, 100,000 հրեայ ընտանիքներ գաղթած են Հայաստան։ Յետոյ մի քանի հայ նշանաւոր ընտանիքներ իրենց ծագումը կը համարէին այս գաղթող հրէաներէն, մինչև իսկ ուղղակի սաղմոսերգու Դաւիթ թագաւորի ցեղէն։ Միայն 38ին Հռոմայեցիք կրցան վերսկսել պատերազմը Պարթևաց ղէմ աւելի ընդարձակ չափերով, բայց առաջին արշաւանքը (Վինտիգիոսի Բասսոսի) անորոշ թողուց զործը։ Որմէ վերջ Անտոնիոս իր վրայ, առաւ Պարթևաց ղէմ պատերազմը, նշանակուած ըլլալով իշխող հռոմայեցեաց արեւելեան բոլոր տիրապետութեանց կէսին վրայ։ Անտոնիոսի երկու արշաւանքները իրեն չընդհատ յաղթողի դափնի պսակներ։ Առաջինոյ (37 տ.) մէջ նա շատ մարդ կորսնցուց, բոլոր ռազմամթերքը, պատերազմական ամբողջ զէնքերը, և հարկադրուեցաւ իր զօրքին մնացորդներով ապաւինիլ Հայաստան քանի որ Արտաւազդ Հռոմայեցեաց կողմէն էր։ Անտոնիոս իւր անյաջողութեան պատճառը Հայերը համարեց, ուստի երկրորդ արշաւանքը (34 տ.) մեղաց Հայաստանի վրայ, բայց նոյնպէս մեծ յաջողութիւն չունեցաւ, քանի

մը հայ քաղաքներ կողոպտեց և նենգութեամբ բռնեց Արտաւազդը և տարաւ Եգիպտոս։ Հայերը անմիջապէս թագաւոր հռչակեցին Արտաշէս Բ. (Արշամ 33-20 տ. Ն. Ք.)։

Այնու հանդերձ Անտոնիոս ուղեց հրեայակել ինքզինքը յաղթող Ալեքսանդրի, Եռասպետութիւնը հրատարակեց որ Հայաստանն կը բաժնուի Փոքր Հայք և Արարկատան կան գաւառները, առաջինոյ թագաւոր նշանակուած էր Պոլեմոն, (Անտոնիոսի քրոջ փեսան), երկրորդին՝ Արիտարքան (Հոռոմ կրթուած)։ Արտաւազգ ի սկզբան արծաթէ շղթայով կապուած և յետոյ ոսկի շղթայով Ալեքսանդրիոյ փողոցները պիտի շրջէր իրեւն Անտոնիոսի կեղծ յաղթանակին գարդի։ Կղէոպատրա նստած էր բարձր ոսկեղէն գահին վրայ։ Անտոնիոս կը պարգեւէր Եգիպտոսի թագուհւոյն և կը խոստանար ազատութիւն եթէ նա երկրպագութիւն ընէր անոր առջեւ։ Հայ թագաւորը մերժեց զինքը նուաստացնող պահանջը, և Դիոն կասկիտ այս առթիւ զիտողութիւն կ'ընէ ըսելով թէ՛ «Հայերը բարձր հոգոյ տէր ըլլալը ցոյց տուին և արժանացան փառաւոր անուան»։ Յետոյ Անտոնիոս հրամայեց զրամ կոխել իւր պատկերով (հայ արքայական թագով) և կղէոպատրայի «Հայաստան նուաճեալ» խորագրով։ Անտոնիոսի և կղէոպատրայի որդին հանդիսաւոր օրերուն սկսաւ կրել հայկական երկայն պարեգօտ և արքայական թագ իւր Հայաստանի ապագայ թագաւոր։ Վերջ ի վերջոյ Արտաւազգ զըլխատուեցաւ և Տակիտոս Անտոնիոսի հայոց թագաւորին հետ բոլոր վերաբերմունքն կը կոչէ «Ոճիր Անտոնիոսի»²։

1. Պոլեմ. 7 (Ստրոնհաս), Գալէն, 151. Ողբերգութեան այս տողերը 1170-1172.

2. Հրէաստանի վրայ արշաւանքի մասին բայց Յովսէփոս փառաբան զբողջը, պահուած են վկայութիւններ փառաբան Քիւլանդացւոյն քով.

3. Մոմսէն այս յաղթանակը կը կոչէ «Յագրանկար»։ Օրինաւոր յաղթանակը պէտք էր ծերակոյտն արդէր և

է Հոռոմ կատարուէր, իսկ Անտոնիոս ինքն իրեն յաղթանակ կը նշանակէ և այն Եգիպտոսի մէջ.

4. Իսկական առաջ բերումներ կ'են գրողներու, Տակիտոսի, Դիոն Կասիոսի, Վելլէի, Պատերիկոսի, Պլուտարքոսի, Սեպտիմիոսի են. մեծաւ մասամբ ստուգուած մեղմէ, տես Խաւաթեանց 242-3, Գալէն 154.

Հեռաւոր Արեւելքի մէջ Հռոմայ պատեր վերականգնելու համար կը մնար (Օգոստոսի՝ երբ նա միապետ եղաւ ըստ դիտողութեան Տ. Մոմսենի, նա Զանաց Անտոնիոսի ձեռնարկած զործերը մաքրել։ Օգոստոս զգուշաւոր մարդ էր, Արտաշէս Ռին թողոց ինքնագլուխ կառավարել՝ թոյլ տալով որ «Արքայից արքայ» կուշուի, գոհանալով պարզ ձեւականապէս ճանչնալու Հռոմայ վերին իշխանութիւնը։ Եւ միանգամայն Արտաշէսի մահէն ետքը իր եղբայրը և յաջորդ Տիգրան Գ. (կամ Բ. 20—6 ա. Ն. Ք.) բարձրացնել հայկական գահի վրայ, յանձնուած էր Տիրերիոսի կողմից (Օգոստոսի խորթ որդւոյն) (ապագայ իշխանին)։ Տիրերիոս կոչուող թողոր ժողովրդեան առջև արքայական թագը Տիգրանի գլուխը անցուց, — ի մէջ այլոց Հռոմ դաստիարակութիւն առած էր — որով կերպով մը հաստատութիւն էր այս Հայաստանի աւատականութեան առ Հռոմ։ Այս զործը առիթ եղաւ դրամ կոխելու Օգոստոսի պատկէրով՝ ձնրադրութեամբ Հայաստանի «Հայաստան դաշնակից» վերտաւորութեամբ։

Հռոմէական բանաստեղծները Վիրգիլիոս, Որատիոս, Ովիդիոս, ամէն կերպով աշխատած են փառաբանելու այս դէպքը։ Այսպէս օրինակի համար Ովիդիոս կը գրէր «Արդ Հայը խաղաղութիւն կը պահտի»՝ Վիրգիլիոս ինչեանի վահանին վրայ նկարել կու տայ Արաքսը յաղթուած իբրեւ խորհրդապատկեր Հայաստանի։ «Եւ Արաքսը չի հանդուրժեր կամուրջներ»։ Ասոնց բոլորն յայտնի չափազանցութիւններ էին։ Հռոմայ գերիշխանութիւնը Հայաստանի վրայ այս դարեջրջանին պարզ անուանական էր։ «Գերիշխանութիւնը Հռոմայ Հայաստանի վրայ, կ'ըսէ Մոմսէն, հակամէտ չափազանցնելու հռոմայեցւոց յաջողութիւնները, ունայնամտութիւն էր»։ Այս էր բոլոր արդիւնքը որուն հասած էր Հռոմ երկդարեան պատերազմներու միջոցաւ։

(Շարունակելի) Թրգմ. Հ. Յ. Վ. ՄԱՐԿԱՐԵԱՆ

1. Nunc petit Armenius pacem... Trist. II.
2. Et pontem indignatus Araxes... Aen. VIII. 728.

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՇՍՊ ԳՈՐԳԵՐՈՒ ԱՌԱՍՊԵՂԸ (՝)

Մեր մօտ հազիւ տասնհակ մը տարիներ է Վեր Հայկական զանազան ճարտարութեաններով զբաղող ուսումնասիրութիւնները լոյս կը տեսնեն։ Մեր կողմէն ցիւր բան ըսուած է քանի որ մեր մասնագէտները կարելի է համարել մէկ ձեռքբերուաւ հինգ մասններու վրայ իսկ։ Միա՝ զապաթաշինութեան, թղթաշինութեան, կազմարարութեան, մելան և ներկ պատրաստելու, ոսկերչութեան, մետաղագործութեան, հիւսուածեղէններու թէ՛ արհեստական և թէ՛ արուեստական մասերուն

մասին, դժուար թէ կարենանք գոհացուցիչ մասնագիտական ուսումնասիրութեան մը հանդիպել, և զարմանալին այն է որ այդ ամէնուն մէջ ալ Հայը ներկայացած է իբր աչքի զարնող ճարտար և կարող վարպետ մը, որ ճոխացուցած է այդ արուեստները, ինքնատիպ և հիմնալի յաջողութեանով։ Մեր եկեղեցիները թանկագին շտեմարաններ եղած են Հայ արհեստին և արուեստին։ Կոն առատ նւթ կայ՝ լաւ կամ գէշ՝ պահուած, որ կրնայ ցոյց տալ աշխարհին Հայը իբր բրուտ-ապակեգործ,